ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

2016

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ ☐

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ ☐

Միրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:
Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Յանկանում ենք հաջողություն:

1 Ե՞րբ է Տրդատը մեկնում Հռոմ՝ թագը Ներոնից ստանալու նպատակով.

1) 64 թ.
2) 66 թ.
3) 65 թ.
4) 62 թ.

2 Ե՞րբ է կնքվել Մծբինի 40–ամյա խաղաղության պայմանագիրը.

1) 278 թ.
2) 297 թ.
3) 298 թ.
4) 287 թ.

3 Ե՞րբ է տեղի ունեցել Արձնիի ճակատամարտը.

1) 774 թ. ապրիլի 15–ին
2) 774 թ. ապրիլի 24–ին
3) 775 թ. ապրիլի 15–ին
4) 775 թ. ապրիլի 24–ին

4 Ե՞րբ է Լևոն II–ը օծվել հայոց թագավոր.

1) 1187 թ. հունվարի 6–ին
2) 1189 թ. հունվարի 6–ին
3) 1198 թ. հունվարի 6–ին
4) 1194 թ. հունվարի 6–ին

5 Ե՞րբ է հրավիրվել Անգեղակոթի գաղտնի խորհրդակցությունը.

1) 1677 թ.
2) 1679 թ.
3) 1689 թ.
4) 1699 թ.

6 **Ե՞րբ է ստեղծվել Արմենական կուսակցությունը.**

1) 1888 թ.
2) 1885 թ.
3) 1887 թ.
4) 1890 թ.

7 **Անդրկովկասի հանրապետությունների ներքին սահմանները որոշելու հանձնաժողովի նիստը Թիֆլիսում գումարվեց՝**

1) 1921 թ. փետրվարի 26–ից մարտի 16–ը
2) 1921 թ. ապրիլի 20–24–ը
3) 1921 թ. հունիսի 25–27–ը
4) 1921 թ. սեպտեմբերի 26–ից հոկտեմբերի 13–ը

8 **Ե՞րբ են ՀՀ–ում անցկացվել առաջին նախագահական ընտրությունները.**

1) 1991 թ. մարտի 1–ին
2) 1991 թ. սեպտեմբերի 21–ին
3) 1991 թ. սեպտեմբերի 23–ին
4) 1991 թ. հոկտեմբերի 16–ին

9 **Ըստ հայկական ավանդության՝ ո՞ւմ անունից են առաջացել «արմեն» և «Արմենիա» անվանումները.**

1) Արամի
2) Արմենոսի
3) Արամանյակի
4) Արամայիսի

10 **Ո՞վ է կառուցել Գառնիի հեթանոսական տաճարը.**

1) Արգիշտի I–ը
2) Տիգրան I–ը
3) Արտաշես I–ը
4) Տրդատ I–ը

11 **Նոր Ջուղայի արվեստագետներից ո՞վ է հաստատվել Մոսկվայում և մեծ դեր կատարել ռուսական արվեստի զարգացման գործում.**

1) Հովհաննես Միրաքը
2) Հովհաննես Մրքուզը
3) Բոգդան Սալթանովը
4) Թորոս Ռոսլինը

12 **Սևանի ճակատամարտից հետո նահանջող արաբներին ո՞ւմ ջոկատը նոր ջարդ տվեց.**

1) Գևորգ իշխանի
2) Աշոտ իշխանի
3) Գագիկ Արծրունու
4) Աբասի

13 **Ո՞րն է դարձել Դավիթ բեկի ստեղծած հայկական իշխանության կենտրոնատեղին.**

1) Տաթևի ամրոցը
2) Հալիձորի բերդը
3) Զևայի բերդը
4) Որոտանի բերդը

14 **Ո՞վ է գունավոր հեռուստատեսության հիմնադիրը.**

1) Անդրեաս Արծրունին
2) Հակոբ Չամչյանը
3) Հովհաննես Ադամյանը
4) Խորեն Սինանյանը

15 **Հայկական ուժերը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ 1920 թ. նոյեմբերի 21–ին ազատագրեցին՝**

1) Կապանը
2) Շուշին
3) Գորիսը
4) Սիսիանը

16 **Թվարկվածներից ո՞վ է քաղաքական բռնաճնշումների տարիներին աքսորվել Հայաստանից.**

1) Եղիշե Չարենց
2) Ակսել Բակունց
3) Հայկ Բժշկյանց
4) Գուրգեն Մահարի

17 **Ո՞ր արքայի մասին է պատմիչի ստորև բերվող վկայությունը.**

«Սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ ...և մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը»:

1) Երվանդ Սակավակյացի
2) Տիգրան I Երվանդյանի
3) Տրդատ III Արշակունու
4) Արտաշես I–ի

18 **Լրացնել բաց թողնված անձնանունը.**

«...Բայց մինչև ես _____ էի՝ հսկա էի, մի ոտս հենում էի մի լեռան վրա, իսկ մյուսն էլ՝ մյուս լեռան ... Այդ երկու լեռներից մեկը դու էիր, իսկ մյուսն էլ՝ հունաց թագավորը»:

1) Մուշեղ
2) Վարդան
3) Վաչե
4) Վասակ

19 **Արևմտյան քաղաքակրթության հետ շփումների խորացման արդյունքում հայերին երբեմն կոչում էին.**

1) Եվրոպայի ասիացիներ
2) Արևմուտքի ասիացիներ
3) Ասիայի եվրոպացիներ
4) Փոքր Ասիայի եվրոպացիներ

20 **Ինչպե՞ս էր կոչվում Վարդանանց երդումը.**

1) «Հավատո հանգանակ»
2) «Հավատո ուիտ»
3) «Վասն հայրենիքի»
4) «Վարդանանց ուիտ»

21 **Ո՞րն էր Տիգրանակերտի անկման պատճառը.**

1) Քաղաքը պաշտպանող կայազորի հրամանատարն անցավ հռոմեացիների կողմը:
2) Քաղաքում վերջացել էին սննդամթերքն ու ջուրը, և սկսվել էր համատարած սովը:
3) Քաղաքում տարածվել էր համաճարակ, և պաշտպանների թիվը զգալիորեն կրճատվել էր:
4) Քաղաքը պաշտպանող օտարազգի վարձկանները հռոմեացիների առջև բացեցին դարպասները:

22 **1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով՝**

1) Ռուսաստանին անցան Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի, Ալաշկերտի, Բայազետի գավառները, Սև ծովի առափնյա շրջանները՝ Բաթում նավահանգստով:
2) Արևմտյան Հայաստանի մեծ մասը, այդ թվում Էրզրումն ու Բասենը, մնաց Օսմանյան կայսրությանը:
3) Արևելյան Հայաստանի մի զգալի հատված՝ Երևանի ու Նախիջևանի խանությունները, անցավ Ռուսաստանին, սակայն Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքի ու Ատրպատականի գավառները վերադարձվեցին Իրանին:
4) Ռուսաստանին անցավ Արևելյան Հայաստանի մի հատվածը՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Գանձակը, Ղարաբաղը, Շիրակը:

23 **Վանի թագավորության արքաների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա. Արգիշտի II	դ. Էրիմենա
բ. Ռուսա III	ե. Արգիշտի I
գ. Իշպուինի	զ. Սարդուրի II

1) գ, ե, ա, զ, բ, դ
2) ե, զ, ա, գ, բ, դ
3) գ, ե, զ, ա, դ, բ
4) զ, գ, ե, ա, բ, դ

24 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սմբատ I–ի դիմադրությունը Կապույտ բերդում
բ. Խալիֆի կողմից Գագիկ Արծրունու ճանաչվելը Հայաստանի թագավոր
գ. Բագրատունյաց թագավորության հիմնադրումը
դ. Սմբատ I–ի և Բյուզանդիայի միջև պայմանագրի կնքումը
ե. Սաջյան ամիրայի զորքերի ջախջախումը Դողսի ճակատամարտում
զ. Յուսուֆ ամիրայի հարձակումը Հայաստանի վրա

1) գ, ե, դ, բ, ա, զ
2) դ, գ, ե, բ, ա, զ
3) դ, գ, բ, ե, զ, ա
4) գ, դ, ե, բ, զ, ա

25 **Գահակալման տարիները համապատասխանեցնել արքայի անվանը.**

1. Արտավազդ III	ա. Ք. ա. 160–115 թթ.
2. Տիգրան I	բ. Ք. ա. 189–160 թթ.
3. Արտավազդ I	գ. Ք. ա. 2–Ք. հ. 1 թթ.
4. Արտաշես I	դ. Ք. ա. 95–55 թթ.
5. Տիգրան IV և Էրատո	ե. Ք. ա. 5–2 թթ.
	զ. Ք. ա. 115–95 թթ.

1) 1–ե, 2–զ, 3–ա, 4–բ, 5–գ
2) 1–գ, 2–ա, 3–զ, 4–բ, 5–ե
3) 1–գ, 2–զ, 3–ա, 4–բ, 5–ե
4) 1–ե, 2–զ, 3–ա, 4–դ, 5–գ

26 **Հայդուկապետերին տրված անունները համապատասխանեցնել նրանց անուն–ազգանուններին.**

1) Արաբո	ա. Սերոբ Վարդանյան
2) Աղբյուր Սերոբ	բ. Հովսեփ Արղության
3) Հրայր Դժոխք	գ. Նիկողայոս Տեր–Հովհաննիսյան
4) Վարդան	դ. Արմենակ Ղազարյան
5) Նիկոլ Դուման	ե. Սարգիս Մեհրաբյան
	զ. Առաքել Մխիթարյան

1) 1–ա, 2–դ, 3–ե, 4–գ, 5–բ
2) 1–զ, 2–ա, 3–դ, 4–բ, 5–գ
3) 1–ա, 2–գ, 3–դ, 4–զ, 5–ե
4) 1–զ, 2–ա, 3–դ, 4–ե, 5–գ

27 **Տրված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.**

ա) Արաքսը (հնում՝ Երասխ) սկիզբ է առնում Բյուրակնյան (Սրմանց) լեռներից և խառնվելով Կուր գետին՝ թափվում է Կասպից ծով:
բ) Ճորոխն ունի 345 կմ երկարություն, սկիզբ է առնում Ծովք լճից և միախառնվելով Տիգրիսին՝ թափվում է Պարսից ծոց:
գ) Եփրատ գետն ունի երկու ճյուղ՝ Արևմտյան Եփրատ և Արևելյան Եփրատ (Արածանի), որոնք միախառնվում են Ակն քաղաքի մոտ:
դ) Տիգրիսը, որ Հայկական լեռնաշխարհի հարավային մասում է, Հայաստանով անցնում է 400 կմ և նույնպես ունի երկու ճյուղ՝ Արևմտյան և Արևելյան:
ե) Վանա լիճը ծովի մակերևույթից բարձր է 1916 մ և ունի 4 կղզի:

1) բ, ե
2) բ, դ
3) ա, գ
4) ա, ե

28 **Ե՞րբ է գահակալել Գագիկ II Բագրատունին.**

1) 1020–1041 թթ.
2) 989–1048 թթ.
3) 1042–1045 թթ.
4) 1029–1065 թթ.

29 **Ե՞րբ է լուծարվել Հայկական մարզը.**

1) 1836 թ.
2) 1840 թ.
3) 1846 թ.
4) 1828 թ.

30 **Ո՞վ էր հեթանոս հայերի հյուրընկալության աստվածը.**

1) Վահագնը
2) Արեգ–Միհրը
3) Տիրը
4) Վանատուրը

31 **Նշված կայսրերից ո՞վ է համարվում Մակեդոնական (Հայկական) հարստության հիմնադիրը Բյուզանդիայում.**

1) Կոստանդին Մոնոմախը
2) Վասիլ I–ը
3) Հուստինիանոսը
4) Մորիկը

32 **Ովքե՞ր են երդվել հետևյալ խոսքերով.**

«Այսուհետև իմ բարձը լինելու են Հայաստանի լեռները, իսկ բաղձալի երազանքը՝ հայրենիքի համար մեռնելը»:

1) «Զինակիր» խմբի անդամները
2) ՀՅԴ անդամները
3) ֆիդայիները
4) Ս. Աստվածածնի վանքում խորհրդակցության մասնակիցները

33 **Ե՞րբ է ընդունվել պատմական այս որոշումը.**

«Ընդառաջելով ԼՂԻՄ–ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և ԼՂԻՄ–ը Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմից Հայկական ԽՍՀ–ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:

1) 1988 թ. հունիսի 15–ին
2) 1989 թ. դեկտեմբերի 1–ին
3) 1988 թ. փետրվարի 20–ին
4) 1990 թ. օգոստոսի 23–ին

34 **Թուրքական կառավարության կողմից 1839 թ. հրապարակված բարենորոգումների հրովարտակն անվանվել է՝**

1) պոլոժենիե
2) թանզիմաթ
3) դեկրետ
4) կանոնադրություն

35 **Արևմտյան Հայաստանում նախարարական հողային տիրույթները մասնատելու և դրանով երկիրը թուլացնելու նպատակով ի՞նչ ձեռնարկեց Հուստինիանոս I–ը.**

1) Հողեր ժառանգելու իրավունք շնորհեց իշխանական տների ավագ ներկայացուցիչներին:
2) Տոհմական կալվածքներ ժառանգելու իրավունք շնորհեց նաև կանանց ու աղջիկներին:
3) Հողեր ժառանգելու և գնելու իրավունք շնորհեց բարձրաստիճան հոգևորականներին:
4) Անժառանգ մահացած իշխանական տների ներկայացուցիչների թողած հողային տիրույթների ժառանգորդ հռչակեց Բյուզանդական կայսրությանը:

36 **1918 թ. տեղի ունեցած իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Դրոյի առաջին հաղթական մարտը Բաշ Ապարանում
բ. Սարդարապատի գրավումը թուրքական զորքի կողմից
գ. Ալեքսանդրապոլի գրավումը թուրքական զորքի կողմից
դ. Ղարաքիլիսայի ճակատի կազմակերպումը
ե. Սարիղամիշի գրավումը թուրքական զորքի կողմից

1) ե, գ, բ, ա, դ
2) գ, ե, բ, դ, ա
3) դ, ե, բ, գ, ա
4) գ, ե, դ, բ, ա

37 **Ստորև բերված պատմական իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա) Հրանտ Դինքի սպանությունը
բ) Լաչինի ազատագրումը
գ) «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունների ստորագրումը
դ) Արթուր Մկրտչյանի ընտրվելը ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ
ե) հայ ազատամարտիկների կողմից Կրկժանի ազատագրումը
զ) եռաստիճան դատական համակարգի ներդրումը ՀՀ–ում

1) դ
2) ա
3) զ
4) ե

38 **Կատարել համապատասխանեցում.**

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Զեյթունի ապստամբությունը	1	1894 թ.	1	Մկրտիչ Ավետիսյան
2	Սասունի հերոսամարտը	2	1862 թ.	2	Նիկոլ Դուման
3	Վանի հերոսամարտը	3	1901 թ.	3	Մեծն Մուրադ
4	Ս. Առաքելոց վանքի կռիվը	4	1895 թ.	4	Մկրտիչ Յաղուբյան
		5	1896 թ.	5	Անդրանիկ Օզանյան

1	4	5
2	5	1
3	1	3
4	3	2

1)

1	2	4
2	1	3
3	5	1
4	3	5

2)

1	2	2
2	3	5
3	1	3
4	5	4

3)

1	3	2
2	5	3
3	2	4
4	4	5

4)

39 **Ի՞նչ անուններով էր հայտնի 1916 թ. հոկտեմբերի վերջին Լոնդոնում ձեռք բերված համաձայնությամբ հիմնականում հայ կամավորականներից ստեղծված զորամիավորը.**

1) Հայկական գումարտակ
2) Արևելյան լեգեոն
3) Հայկական հարվածային գունդ
4) Պաղեստինյան լեգեոն
5) Հայկական լեգեոն

40 **Ընտրել սխալ պատասխանները:**

ՀՀ–ն 1920 թ. վերջին խորհրդայնացվեց, որովհետև՝

1) Խորհրդային Ռուսաստանն այդ ժամանակ դրեց Հայաստանն անմիջապես խորհրդայնացնելու պահանջ
2) Թուրքիան ու Խորհրդային Ռուսաստանը դարձել էին սերտ դաշնակիցներ և ուզում էին կործանել Անտանտի դաշնակից Հայաստանի Հանրապետությունը
3) Անտանտի երկրները երես թեքեցին ՀՀ–ից
4) Հայ բոլշևիկներին աջակցեցին ռուսական Կարմիր բանակը և Խորհրդային Ադրբեջանը
5) Մայիսյան ապստամբությունն ավարտվեց իշխանությունների պարտությամբ
6) քաղաքացիական կռիվները Հայաստանում ավարտվեցին բոլշևիկների հաղթանակով

41 **Թվարկված բարեփոխումներից առանձնացնել երկուսը, որոնք իրականացրել է Պապ թագավորը.**

1) Ի կատարումն Աշտիշատի ժողովի որոշման՝ Պապի հրամանով կառուցվել են վանքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, իջևանատներ և աղքատանոցներ:
2) Պապը մտցնում է եկեղեցուն վճարվող պտղի և տասանորդների կարգ և հոգևորականների եղբայրներին, զավակներին ու ազգականներին ազատում է պետական ծառայություն կատարելուց:
3) Պապի հրամանով փակվում են կուսանոցներն ու այրիների ապաստանները, կույսերին ու այրի կանանց թույլատրվում է ամուսնանալ:
4) Հօգուտ արքունիքի՝ Պապը բռնագրավում է եկեղեցապատկան հողերի մեծ մասը, սակայն ավելացնում է եկեղեցուն վճարվող պտղի և տասանորդ հարկերի չափաբաժինը:
5) Պապը հոգևորականների եղբայրներին, զավակներին ու ազգականներին պարտադրում է պետական ծառայություն կատարել, վերացնում եկեղեցուն վճարվող «պտղի և տասանորդների կարգը»:
6) Հայոց կաթողիկոսի թեկնածու Ներսես Մեծին Պապը թույլ չի տալիս մեկնել Կեսարիա, այլ նա կաթողիկոս է ձեռնադրվում և օծվում Հայաստանում, որով էլ հաստատվում էր Հայոց կաթողիկոսական աթոռի սկզբնական ինքնագլխությունը:

42 **Տրված իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Խոր Վիրապում Լուսավորչին բանտարկելը
2) Լուսավորչի եպիսկոպոսական ձեռնադրությունը Կեսարիայում
3) Բագավանում Գրիգոր Լուսավորչին դիմավորելը
4) Մայր տաճար Ս. Էջմիածնի կառուցման ավարտը
5) Հայ առաքելական եկեղեցու հիմնադրումը

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) հայկական 390–րդ դիվիզիայի հրամանատար Սիմոն Զաքյանի զոհվելը
2) Նվեր Սաֆարյանի՝ հայկական 89–րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար նշանակվելը
3) ԽՍՀՄ–ի և Գերմանիայի միջև չհարձակման պայմանագրի կնքումը
4) ԽՍՀՄ կառավարության կողմից 1925 թ. դեկտեմբերի 17–ի խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագիրը չեղյալ հայտարարելը
5) Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը

44 **Արքայատոհմերի անունները համապատասխանեցնել արքաների անուններին.**

ա. Լևոն Մեծագործ
բ. Վռամշապուհ
գ. Լևոն V
դ. Աշոտ Երկաթ
ե. Արտավազդ II

1) Արշակունիներ
2) Բագրատունիներ
3) Արտաշեսյաններ
4) Հայկազուն Երվանդունիներ
5) Հեթումյաններ
6) Ռուբինյաններ

45 **Սևրի պայմանագրին վերաբերող ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

1) Հայաստանի սահմանները Վրաստանի և Ադրբեջանի հետ որոշելու էր Անգլիան:
2) Պայմանագիրը ստորագրած ՀՀ պատվիրակության ղեկավարն էր Պողոս Նուբարը:
3) Կիլիկիան բաժանվում էր Անգլիայի և Ֆրանսիայի միջև:
4) Հայ–թուրքական սահմանի վերջնական որոշումը իրականացնելու էր ԱՄՆ նախագահը:
5) Միացյալ Հայաստանը, ըստ իրավարար վճռի, Տրապիզոն նավահանգստով ստանում էր ելք դեպի ծով:
6) Պայմանագիրը թեև ժամանակին չի իրագործվել, սակայն Լոնդոնի 1921 թ. կոնֆերանսում այն վերահաստատվել է: